

մը երեցաւ 1895ին մեր տպարանէն, Հ. Բարսեղ վ. Սարգսեանի, որուն տեսութիւնը տեղ տեղ կը տարբերին մեր գրածներէն :

Ինչպէս յառաջ ըսինք, ամենքն ընտիր աշխատութիւններ են, բայց ունին կամ կըրնան ունենալ իրենց պաշտպանները, կամ հակառակ կարծիք ունեցողները : Վերջին կարծիքը զիս ըսուած չէ. անոր համար կարևոր համարուեցաւ պահպանողական սեպուած երկաթուղիներէնս նոր տպագրութիւնը :

Հ. Գ. Զարբանաչեան

Ա Ի Ե Տ Ի Ք Պ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր Ե Ա Ն

Ը Թ Ե Ր Տ Ո Ղ Տ Ի Գ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ Տ Ի

Ա Յ Ս անուամբ և կոչմամբ՝ ծանուցանել ինք զինքը՝ մեր պատմութեան և զպատկեան մէջ անծանօթ մնացեալ և արժանի ծանօթութեան անձ մի, շատ հետաքննող գիտութեանց, մանաւանդ Համարողութեան, այսօրինքն Թուրքանութեան, Տոմարագիտութեան, Առաջաբաշխութեան, Ժամանակագրութեան, այլ և Աշխարհագրութեան, որք կու յայտնեն ոչ միայն իր տիրութիւնը կամ սիրը այսպիսի պիտութեանց, այլ և սուր ու զօրաւոր միաբն և կարողութիւնը՝ բարբ և զժուարին ուսմանց. իսկ իրեն յաշնողութեանը վկայեն իր թողած և ի մեր ձեռք հասած գրուածքն :

Ասոնց շատն առաջին ձեռք գրուածք են, լի սրբագրութեամբք, յաւելուածովք և ծանօթութեամբք, ոմանք այլ մարտը գրուած՝ զոր ինքն թուրք բառով պէյազ կ'ըսէ, առջինն այլ (աղտուա կամ խառնակը) տեֆթիր : Գրուածոցը մէջ խառնած յիշատակներէն կ'իմացուի՝ որ փշ գարուն վերջերը և փ՛լին սկիզբները ծաղկեր է. 35 տարուան միջոցի յիշատակ կայ 1684էն մինչև 1719: Սակայքէ իր անունն և կ'իմացընէ հայրենիքը, Տիրաբանակերտ կոչելով՝ որ է Տիրաբէրքեր,

բայց երկայն տարիներ բնակեր է ի Կարին (Էրզրում), ի Թոխթաթ, ի Սեբաստիա, ուր և յետ երկար թափառելու օտար քաղաքներ և երկիրներ՝ մինչև յանձնաօթ օտար մասն Ափրիկէի, ընտանեկան կակուղ կապով կապուած և վարենանած կ'աւանդուի :

Թողած գրուածքն և այն բազմաթիւ աստղաբաշխական և տոմարական աղիւսակները, ձեւերը, նաև պատկերները տեսողն, անոր ճարտարութեան հետ զուշակէ ծանր և լուրջ բնաւորութիւն մի. բայց յիշատակներէն զուշակուի և բարեխառնութիւնն և զուարթութիւն : Կարծեմ՝ շատ քիչ ազգայինք գտուին այնքան երկար ժամանակ և երկարագոյն շանքով և յամառութեամբ ուսմանց և ուսումնականաց հետեւողք, և զրոց հաւաքողք. որոց սիրովն վառուած՝ ամէն զժուարթութիւն յանձնատեր է, և փափաքեր է ուրիշներու զիրացընել. սրտանց այլ զանգատի և մեղադրէ ու կըծէ ժամանակին եկեղեցականորք՝ այսպիսի բանից անող ըլլալուն : Ինք զինքը միշտ ընթերցող գրէ, մի անգամ միայն Տիրացոռ, բայց անգամ մ'այլ չի մտնար հայրենիքն յիշելու, Իրանից Տիրաբանակերտեան գրելով : Իր ոգին լեզուն և գործը աւելի լաւ բացատրելի՝ թողում իր յատակ ձեռքով գրած կարճ կամ եր'այն յիշատակարանաց, որոց կ'ստապուն իր Ատեղապատութեան և Տոմարի սկիզբը դրած է, բաւական մաքուր գրած, այսպէս :

« Վասն Տեֆտեր գրքիս — Իմանուցումն առ « ուսումնաւոր ընթերցողօք : Այս զըրբս ա մենայն տումարական արուեստից և սա « տեղաբաշխական Տիտովիցն (աղիւսակաց) « և մեկնութեանն Տեֆտեր է - զոր ես նուստս « Աւետիք ընթերցող ծնունդ Տիրաբանակերտ « տեան, որ և սնեալ եղէ ի բազում քա « դաքս, այսինքն, նախ ի Էրզրում քաղաք, « կացի անդ զամս Գ. (1/4), և յետոյ ի « Տիրաբանակերտ քաղաքն փոխեցայ, ի Ռա « ղէշ, ի Վլան, ի Պարսից երկիրն, ի « Քրդաստան, ի Արապիտասն, ի Անատո « լի, ի Սեբաստիա, ի Թոխթաթ և Պատանա « իմ շրջին այսքան աշխարհ, վասն գրա « սիրութեանս և մերեփէթի (արուեստ, պի « տութիւն) աղագաւ. ոչ թէ ի Հայոց գրոց

« միայն , այլ ամենայն ազգաց գրոց , այս-
 « ինքն , Արապաց , Ֆարսից , Զհայաց , Ղըպ-
 « տից , Ասորոց , Ֆրանկաց , ի Յունաց գրոց
 « և վարպետաց . հարցեալ և ժողովեալ ան-
 « համար մեկնութիւն և ճէտովէլ աղիւսակը ,
 « մեծաւ տաժանմամբ , ամառ և ձմեռ զե-
 « գերելով , այս գրքիս աղտոտան՝ . յառաջ և
 « յետեւ առանց կարգի և շղագիր և արագ
 « և թեզ գրով գրէի և լնուի զգիրքս . և ա-
 « բարի որպէս աւէֆտէր , էւ շղագիր և խառն-
 « իխուռ գրելուն պատճառն այն է՝ որ շուս
 « շուս գրէի և ժողովէի , զի մի՛ ձանձրաս-
 « ցին վարպետքն ի դատ տալն ։ Թէ Ոս-
 « տուած կամենայ և ողջութիւն տայ՝ ազո-
 « թիւք ձեր , այս գիրքս ըստոյզ սրբազրու-
 « թեամբ ի պէյագ գիրքն գրելոյ է , ամէն
 « բան իւր կարգն , և ամէն ճէտովէլ իւր
 « մեկնութեանֆն ։ էւ զիտէք որ աւէֆտէր
 « եղած բանն խառնիխուռ կու լինի . իսկ
 « յորժամ որ ի պէյագն ելանն՝ ամէն բան
 « իւր կարգն կու գրլի , զէբա աւէֆտէրն՝
 « միայն գրողն կու գրուէ . մինչ որ սուգոչու-
 « միշ չի լինի (յստակուր) ոչ կարեն զիտե-
 « նալ այլ տեսողք . բայց շատ զրամուտ և
 « հմտաբուն պիտի լինի՝ որ զխառնիխուռն
 « իմանայ ։ Սպսէս և այս գիրքս ։ Շատ տա-
 « ռապանք և աշխատանք քաշեցի այս գրքիս
 « վերա , որ այլոց ազգաց այլասեռից զը-
 « ժուարութեամբ և տաժանելի աշխատու-
 « թեամբ թարգմանեցի ի հայ բարբառ և ի
 « գիր ։ Բայց շատ անուանք աստեղաց կա՝
 « որ մնաց թարգմանելոյ՝ վասն զժար լինա-
 « լուն . և շատ ճէտովէլ կա այս գիրքս որ
 « ըմնայոյ է և գրելոյ , վասն ոչ պատանելոյ
 « կատարեալ զիտող այսմ արուեստի . և մէկ
 « քանի բան այլ իմ շինածն է . որպէս ,
 « Պարզատօմար և Տօմար և այլ մեկնութիւնք ։
 « — էւ եղեւ սկիզբն գրքիս ժողովելոյ և
 « հետեւելոյ իմ այս արուեստի՝ ի թվին
 « Հայոց ՌձԼԳ , և մինչ ի ՌձԾԼ ամն (1684
 « - 1709) ամն՝ այս գիրքս զեւ կու գրվի և
 « կու ժողովի . և զապագայն Աստուած գիտէ ։
 « Ով որ կամի՝ թող ուսանի , և մեզ ողորմիս
 « բաժին հանէ . և ով որ ոչ կամի՝ մի՛ պար-
 « սաւեսցէ զմեզ վասն Աստուծոյ , զի շատ
 « կենանք մաշեցի և տառապանք քաշեցի այս

« Տէֆտէր գրքիս ։ Ողջ լերուք ի յոյս ամենի
 « ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս » ։
 « Այս գիրքս երբ ի պէյագն ելանէ և զերբ
 « լինի՝ զայս զրէ ի վերջն ։ Ըստ նաւաստոյն՝
 « անցեալ զանհուն ալեօք ծովուն , (Բ) նա-
 « ռահանգիստ զնաւս արկեալ՝ ուրախ լինիմք .
 « և կամ յերկանց յըղոյ կանանց սաստիկ
 « ցաւուն՝ ծնեալ զմանկունս , ոչ եւս յիշեմք
 « զվեցիծ նախկին . և զոր ինչ որ գրեցաւ ի
 « պատուական նորայարմար Տօմարիս իմ՝
 « վասն զեռակիրթ և խակալարժ մերազնեայ
 « մանկեանց , յամի Տեառն՝ Ֆրանս (այս ինչ
 « տարի) և Հայոց թվին Ֆրանս , որոց համայ
 « և ընդունելի երեւիցի այս ըմնայասարաս
 « աշխատն իմ , շնորհողին (Աստուծոյ) պա-
 « տիւ և գոհութիւն . իսկ որոց անախորժ և
 « քամանելի թուիցի՝ անմեղալորելիս առջէ
 « զիս , աղաչեմ . զի զամս 17 հետեւեալ այս
 « չքնադադիւտ և ճշգրիտ հանձնարարուեստ
 « Տօմարիս՝ ի սուէ և ի գիշերի մեղուջանս
 « և տաժանելի անհանգստութեամբ
 « Թիղթին վարի ծայրն կարուեր է և յիշատա-
 « կին վերջը կորեր է , բայց մէկ երկու տող
 « պիտի ըլլայ պակասն ։ Լսենք վերջիչեալ
 « զանպատն և մեղադրանքն այլ՝ ուրիշ գրքի
 « (Աշխարհագրութիւն) մէջ գրած . « Գանգատ
 « Ընթերցողիս առ իմաստուն գրասերոյ . զի
 « մինչ գրէի զայս գիրքս , մանուաւոր զայս
 « Արտաքին մեկնութիւնս (որ է Ասորոց իշոխ
 « կամ Յեսու քահանային) Յաղագս բնու-
 « թեան գիրքն) բազում վիրտ հասուցին , և
 « առասպելաբանութեամբ անարգանք և նա-
 « խատինք , գառնութիւնք և վէճք և ազգի
 « ազգի չարակրութիւնք դիպեցուցին տառա-
 « պելոյս՝ վասն գրքիս գրելոյն և ժողովելոյն
 « ամենայն ազգաց օրինակաց թէ թարգմա-
 « նութեան , պիտաբակելով զմեզ , որ կենանք
 « մաշեցի ի պատճառս որոյս , սուգ և բիրտ ,
 « ուսումնաստեց և նախանձոտ , զբախօս և
 « գինէմոյ , արծաթամոյ և մարմնապաշտ սիւ-
 « տարիծ , ուսող և մանրող Դանիելի զա-
 « զան , անուամբ միայն կարգաւորք ազգիս
 « մերոյ , մանաւանդ ինքնահաւան անժուր
 « ընթերցողք , որոց կամքն » Այս տեղ
 « այլ թուղթն կարած է , թերեւս խղճալով

անժուրներուն վրայ ։ Բայց , ուրիշ մէկ նման
 զորց մէջ (Չի՛ճ, Աղիւսակը) դրանն՝ թըղթին
 վերի մասին վրայ ըլլալով՝ ամբողջ մնայ .
 զբքին համար կ'ըսէ . « Գծվոր է , առանց
 « վարպետ չես կարէր գտանել . ի վարպետէ
 « ուսիր զմուտ Խորանիս . և թէ ոչ՝ մի՛ պար .
 « սաւեր զիս նուստացեալս . զի շատ կեանք
 « մաշեցի հետ այս արուեստիս՝ որ կայ ի
 « զիրքս՝ գրեալ , և շատ նախատիրք լսեցի
 « որովայնամալ և արբշիւ ուսումնատեց ե .
 « կեղեցականաց . և ի փառս Աստուծոյ համ .
 « բերէի վշտաց և նեղութեանց . և լռելեայն
 « պարսպեալ հետեւէի զորց , և զեպրեալս
 « մաշէի ի գրունս ուսուցիչ իմաստասիրաց ,
 « որ տեսնէին զՎանս իմ հետ այս արուես .
 « տիս , և մխիթարեալ յորդորէին անձանձիր ,
 « և ուսուցանէին զաս տպով՝ զոր ինչ խըն .
 « դրէի ։ Վայ ինձ տառապեալ Աւետարեցիս ,
 « որ միշտ մտածեմ լալով , թէ , ո՞վ արձն
 « իմ , մի՛ երթալ ի հետ ոմանց՝ արբեցու .
 « թիւն և զեխղութիւն առնել և զասարկա .
 « բանել վայրբար . այլ լաւ է պարսպ զի .
 « սուլթանս ուսանել՝ քան թէ նախանձելով
 « զկեանս անցուցանել . կամ թէ՛ լաւ է
 « շատգետ մեղաւոր՝ քան թէ անասակ ար .
 « դար ։ Այլ զի յոյս ունիմ որ Աստուած
 « մեղաւորաց կու ողորմես ։ » — Ուրիշ տեղ
 « մ'այլ ծագրաբանութեամբ գրէ . « Թէ՛ զխես
 « հանել (աստեղաց աղիւսակի մի նշանները) ,
 « մեծարու ես . և թէ ոչ՝ մի՛ վայրբար
 « պարսուեր զմեզ , զի շատ կեանք մաշեցի
 « այս արուեստիս՝ մինչ որ խելամուտ եղէ .
 « քանզի այս Համարութիւնքս՝ սկսայով
 « երկաթ կտորանել է . թէ՛ առես , ճրպէս կու .
 « արեմ՝ սկսայովս՝ երկաթ , — տուուսլմիշ
 « եղած կարմրակ երեք տարւան զինէկ իմէ՛
 « խորակէկ քատէյով , և մատղղուկ ստիճնէ՞
 « տաքուկ թէպտպիկ կեր , և թէ՛ հատուր . աչքը
 « շէ՛ ու փէ՛շ լինի և շլըբ մլըբ . յայնժամ զտւ .
 « մտրճուն օրսն (սալ պարբան) թլըբ թլըբ
 « կու շարպես սկսայով , և կու բանեցընես
 « զայս զիրքս , և փորդ կու լտառ » ։
 Աւելի սրտաշարժ և զարմանալի է իր եր .
 կայնամիտ վշտակութիւնն՝ գիտութեանց հա .
 մար . « Մինչպես ես մեղաւոր ընթերցողս՝
 « էի ի յԱրդրում քաղաք՝ պարսպեալ հետ

« զորց և տուամբական արուեստից՝ զրեղ և
 « յայլոց ազգաց ի հայ լեզու թարգմանել ,
 « եկն աստիարաշխ մի ի ֆուսանսիդու երկրէն ,
 « ի քաղաքս , որ պիտի գնայր ի Չինուամ .
 « չին երկիրն , և մեր լուեալ՝ անյապաղ զը .
 « նացաք ի մօտն . և բազում ամսօրեայք
 « զեգեբելով զնալ և զալ ի օթեվանս նո .
 « րա , որ իջնանալ էր ի տեղի իմիք Նա .
 « զուկի խան կոչեցելոյ . և հարցեալ զբրեանց
 « և ի մաստութեան կողմանէ , և զբրեանք
 « նորա որոնելով և հարցանելով , և երբեմն
 « այլ անծանօթ զժողովրդաց աստիպաղտու .
 « թեան արուեստն զաս առնելով , զաի զիրք
 « իմն ի մօտ նորա , և տեսի զայս Աստու .
 « զաց շարքն , որ անծանօթ էր ի մեր զի .
 « սուլթանէն և չկայր ի մէջ մեր ազգին . և
 « Ես տեսի որ կարի հարկաւոր էր արտա .
 « քարշել ի մեր բառն . բայց անկարելի էր
 « և դժուար . զի ինքն ճանապարհի վրայ էր ,
 « Գնալոյ թէսպիր էր (պարսաս)՝ և ոյս ,
 « մէկ շաբթով կամ երկու և կամ ամսով
 « երկուսով հնար չէր լի՛ թարգմանէի . և
 « խիտա փափագեցայ թէ՛ օրինակն հանեմ .
 « սակայն ի ֆուսանի բառ էր և զժուար էր .
 « և շատ աղաչեցի և պաղատեցի այն մար .
 « պետին , թէ՛ զայս պարսպ ի մեզ տա .
 « րինակելոյ համար , կամ զու տան՝ ես գրեմ .
 « Ոյ՛ եղու հնար . և երբեմն տաէր , Այսօր
 « կամ վաղն՝ թէ՛ հօտ միամը՝ եկ զրեա . և
 « էլ յանկարծ և ցնաց . և ես մնացի սիրա .
 « հար այս բանիս ։ Կանց մին երկու ամիս ,
 « իմացաք որ թէ՛լրիզ է գնացեալ . և ես
 « անյապաղ ելեալ Արդրումայ ի ձևեռնային
 « ցրտաստաղց եղանակին և ի բքարեր օղց՝
 « զանց առնելով , աշխատալ աճապարեցի
 « հետեակ՝ զաւառէ ի զաւառ . գնացեալ ի
 « թէ՛լրէզ՝ զտի անդ զնա . և նորա տեսեալս
 « զարմացաւ և ապուշ մնաց , տեսանելով
 « զՎանս իմ և զխոնճ ճանապարհիս . կամէր՝
 « թէ՛ ճանապարհն զիս բուքն խեղդէր . և
 « շատ տառապանք քաշեցի՛ մինչ որ զը .
 « նացի . և յօժար կամօք շնորհեց զօրի .
 « նակն , և թարգմանեցի ձեռամբ նորա , և
 « առեալ զարձայ ի Էրզրում , վառն որոյ ,
 « թէ՛ օգտիս բան ինչ ի ամանէ և ուսանիս ,
 « յիշեալ զմեզ , որ տաժանելի տառապանք

« քաշեցի այս գրոցս ուղորն (ի շնորհս , « վասն) , և թէ ոչ՝ մի պարտւեք զմեզ » :

Եթէ այդ ֆոնանկ աստղաբաշխն, որ հաւանորէն Յիսուսեան միսիոնար մ'էր, հայեւրէն կամ թուրքարէն չէր գիտեր, հարկ է որ Աւետիք քիչ շատ անոր լեզուն գիտցող ըլլայ. մէկ գրուածքին համար կ'ըսէ, ի ֆոնանկաց թարգմանեալ, ուրիշներ այլ յարապաց, պարսկէ, յասորեկէնէ, վրացեկէնէ, քաղզէարէնէ այլ՝ անոնց ինններեկի կանոնով Չատկացոյցը ձեւացուցած է անոնց գրերով վաշելուչ գրած, ինչպէս և ասորաց գրերն¹. ուրով յայտնուի իր անյագ ուսումնասիրութեան բանալիք գտնելն և գիտնալ գոթն կամ ութ կամ աւելի լեզու: Վերջոյ գրեալ աստղաբաշխին համար ըսածին վերեւն գրեր (և յետոյ արեր) է, « թարգմանեցեալ ի շատիկն ի « հայ ուսման Աւետիք ընթերցողէ » : Իսկ իր և մեր հայրենի լեզուէն՝ առած է Անանիայ Շիրակացոյ և անկէ առող Յովհ. Կոզեան վարդապետին գրածը, Յովհ. Սարկուազին, Յակովբ Ղրիմեցոյն՝ ի խնդրոյ թովմայի Մեծօրիցոյց գրած Տօմարի, և այլ սոմարա՝ գրացի՝ ժամանակագրութեան համար՝ Սամուէլ Անեցիին՝ ըստ Եւսեբիոսի, առանց՝ անուանելն յիշելու :

Աւետիքի այլևայլ գրուածներէն քանի մի մեծադիր բայց բարակ հատորներ՝ խիս խիս առեցիով, գտեր էր ի թօխսթ Կ Արամեան Դաւիթ ուսումնասէր Սեբաստացին, որոց մէկն կամ երկուքն կարծած թուրքարէն կամ աւարեբրէն գրուած էր. երկու աւելի հաստ հասոր այլ՝ ուրիշի ձեռքը յերեւան եկաւ: Արդ, ասոնց մէկ հատորն՝ նախայիշեալ Տօմարագիտութիւն և Աստղաբաշխութիւնն է (262 երես), մեծապոյն մասն՝ ըստ բանի հեղինակին՝ պէչազ է, մաքուր գրով, տեղ տեղ

լուսանցից վրայ տեֆտէր ըրեր է, այսինքն ծանօթութիւն կամ բացատրութիւն աւելցուցեր է, 200ի չափ այլ սոմարական և աստղաբաշխական ձեւեր և աղիւսակներ: Ի սկզբան՝ Յակովբայ Ղրիմեցոյ Տօմարի մեկնութիւնը օրինակած է, առջի երեսն շերքերը գրէ. « Ո՛վ ընթերցող, այս Տօմարի մեկնիչս՝ որ « սակաւ մի լաւ է գրեալ, նուսաստ մեղաւոր « Աւետիքիս գիրն է. զի նախ սկիզբն զայս « սկսայ գրել. և յորժամ որ բանն գրանն « ցոյց երեստ, և այլ թարգմանութիւնքն որ « մտանք, տեսանք որ կամաց և լաւ գրելն՝ « ձեռք չստաւ. զի տեֆտէր ժողովորդին ձեռքն՝ « քիչ մի լեփիկ քեզ (չուտ) պիտի՝ որ չձան « ձրանան ձեռնուտ թարգմանիչք. և ասաց « թէ այս թող այսպէս տեֆտէր լինի և յետոյ « ի պէյազն հանեմք և նոր գիրք և լաւ և « խառն թէնէքով: Ահա պատճառն այս էր « այս գրքին, սր յառաջն կամ մէջն սակաւ « մի լաւ է գրվեր և այլ շղագիր խառնիխուռ » : Ղրիմեցոյն մեկնութեանն՝ գրուածքն չորս կողմի յաւելուածովք 69 երես բաձած է : Յետոյ գրեր է երես մի բան « Գևորայ վարդ « պպպպի ասացեալ վասն տէրուսական լըր « մանց կանխելոյ և անագանելոյ Չասիկ » : — Յետոյ, « Նորին Յակոբ Ղրիմեցոյ յաղագս « սոմարական մակագութեան՝ թէ ի յորոց « մարդկանէ արհեստաւորեցաւ » : — « Հար « ցումն Եւսեբեայ ժամանակագրի առ Անա « տօյի եպիսկոպոսն ». կէս սոմարական կէս կրօնական : — « Անանիայի Շիրակացոյ մեկ « պետն և մեկնեալ է այլ հեշտ, զոր մա « կանուն Կոզեան կոչի » : — « վասն Տու « մարի հարցումն, զոր արարեալ է Սամուէլի « քահանայի ի խնդրոյ Ստեփաննոսի իմաս « տասիրի » : յորում Սարկուազ վարդապետի գրուածքէն այլ կայ : — « Յակոբ Ղրիմեցոյ, Յաղագս կատարեալ Լուսնի գր « րոյցք » : — « Տօմար գեղեցիկ և շատիֆ » (վաշելուչ). կարճ կարճ սոմարական բանք են : Յետ ասոնց (գրքին 83 երեսէն) սկսի աստղաբաշխական գրուածքն, ձեռք և աղիւսակը. երրորդ երեսին վրայ գծած է չորս ձև Լուսնի խաւարմանց, և ի ներքեւն, « Ո՛վ առա « մարի վարպետ ընթերցող, յիշեալ Աւետիք

1. Ասոնց լեզուէն թարգմանած պարզաստաւ մարի մասին համար՝ կ'ըսէ. « Ետտ աշխատե « ցայ քան զչափն աւելի՝ մինչ որ թարգմա « նեցի զսա ի Ասորաց քրքերէն, բազում որ « պարսպալուի. և թարգմանութեանն ձեռնտու « ի տեղիս տեղիս Եամմաս Ասլանն եղեւ « վասն զժողարքմաց բառերուն. որ չէի հաս « կանալ » :

« ընթերցող գրիչս՝ որ բազում աշխատեցա
 « ի վերայ խաւարման Լուսնի և արարի
 « աստ զնկարքս՝ վասն ուսումնաւոր եկեղե-
 « ցականաց. և զՊղզովին մի խնայեք » :
 Բազմաթիւ ձևեր կամ պատկերք կան արևու
 և լուսնի խաւարմանց՝ հանդերձ բացատրու-
 թեամբք իբր 13 երես, թէ և զրամին շատն
 արեք է՝ որ յետոյ ի պէյազն հոնէ : Յե-
 տոյ գրէ . « կանոնք աստղաբաշխականք վասն
 « պահպանելոյ զաստղութիւն մարմնոյ, շա-
 « րագրեցեալք ի Փայտիանոսէ բժշկէն մեծէ » .
 Խրաքանչիւր ամիս օդն ինչպէս կ'ազգէ, ինչ-
 պէս զգուշանալի է, ինչ ուտելի է, և այլն, ա-
 սոնք են նշանակուած իբր 10 կամ 12
 տողով : — « Մեկնութիւն արեգական ըն-
 « թացման, Լուսնի և Մոլորականաց, և
 « ասփերուն (?) խաւարման բոլորակին, այս զը-
 « ժուարութիւնքս երեւեացին ի դիժքս » : —
 Լուսնի և մոլորակաց զրից մեծ բոլորակ մ'այլ
 գծած է, հաւանորէն լրտխնարէն զրքէ մի,
 վասն զի ներքևը մեծ տանդակն տատերով
 գրած է *Figura aspectuum quæ inseri
 debet paginæ cxxxv primæ partis
 Uranoscopiæ.* (այսինքն, Չեւ դրից կամ
 երեմանց, զոր պէտք է գետեղել Երկնադի-
 տութեան զրոց 135 երեսին) : — Գարձեալ,
 շատ աղիւսակներ կան Լուսնի դրից, և Տու-
 մարի սունից աւարց նկատմամբ միջանկեալ
 էջ մի, « Հարցումն. Չինչ է կէտ կամ գիծ,
 « մակերևոյթի մարմին » : Մէկ տեղ մ'այլ
 մարդագէտ՝ կլոր Արեգակ մի գծած է ամէն
 կողմ՝ ճառագայթած, վրան գրուած՝ Պասակիւր
 Արեգակուսն, բոլը, « Ես եմ սկիզբն ժա-
 « մանակաց. քանզի յինչն զյոսանան Մա-
 « սունք, և ի մասանց Ժամը, ի ժամոց
 « Աւարք և յաւարց Շարաթը, ի շարաթոց՝
 « Ամիսը, և ի ամսոց Տարիք. ի տարեաց
 « Ժամանակը, և ի ժամանակաց Դարք : Այս
 « ամենայն ի յիմ ընթացմանէն ծնանի » :
 Մինչև այս տեղս յիշածներս Աւետիքի
 այս մէկ հատոր զրոց կէտն էր. միւս կիտոյն
 մէջ այլ նման և աննման, բարակ գիւսնա-
 կան՝ քիչ մ'այլ աղծարական՝ բաներ կան.
 Կոր յիշեն ոչ միայն երկար՝ այլ և դժուար
 կ'ըլլար, գուցէ և ձանձրանալի, թէ և կան
 և զուարճալիք :

Շարայարեղի

Հ Ա Յ Ո Ւ Բ Ա Ն Ո Ց

Ռ Է Կ Ա Ն Ա Տ Ի Գ Ա Ղ Ա Ք Ի Ն Մ Է Զ

Ի Տ Ա Լ Ի Ո Ց զանազան քաղաքաց մէջ,
 զխաւարապէս ի Հոռով, Նապոլի, Միլան,
 Վենետիկ, Պալուա, և այլն, դէպ ի թը-
 շուառ և պանդուխտ մեր ազգայիններն եղած
 մարդասիրական և կարեկցական ցոյցերն՝ ժա-
 մանակին արդէն օտար և ընտանի լրագրաց
 ձեռքով մի առ մի ծանուցուած են ընթեր-
 ցող հասարակութեան : Վերջին օրերու մէջ
 ալ Մասիս և Բիւզանդիոն, Ճէրիտիէի Շար-
 գիյէ և այլք՝ իրարմէ քաղելով՝ ծանուցին հայ
 հասարակութեան Ռէկանասի քաղաքին մէջ
 Հայ-որբանոցի մը հաստատութեան լուրը .
 բայց շեմ գիտեր ինչպիսի անտոյզ աղբիւ-
 րէ այդ լուրն առնելով, և միանգամայն աշ-
 խարհազրական անուանց ճշգրտութեան ան-
 փոյթ լինելով, հազարներ էին վերոյիշեալ
 լրագիրներն. իբր թէ Ռէկանասի քաղաքն
 գտնուի Մոնակոյի մօտերը . այսպէս իտալա-
 կան քաղաք մի Փաղղիոյ սահմանակից իշ-
 խանութեան մէջ փոխադրելով, անշուշտ Մո-
 նակոյ և Անկոնա անուանց շփոթութեամբ .
 և որպէս զի թիւրիմացութիւնք ուղղուին,
 կը յսնձնեմ Բազմապիպի էջերուն հետեւեալ
 տողերը, քաղելով կամ մանուանոյ բառ առ
 բառ մէջ բերելով՝ քանի մը նամակներէ հա-
 տուածներ, որք ուղղակի Ռէկանասիէն ստա-
 ցուած լինելով՝ զրոյին հմուտութիւնն երաշ-
 խաւոր ունին իրենց ճշմարտութեան :

Մինչդեռ ի նպաստ Հայոց կազմուած
 ընկերութիւնք՝ իտալոյ զխաւոր քաղաքներ-
 բուն մէջ կը բացատրէին սրտառուչ և հա-
 մակրական պարճուածներով զանազան համա-
 խմբութեանց և կրօնական և քաղաքական
 թէ՛ բարձր և թէ՛ ժողովրդական կանաւաներու
 ձեռքով՝ մեր ազգին անցեալն ու ներկայն,
 վերջին աղետալիւր դէպքերն և նոցա հետե-
 ւանք տիրոջ տիրօր վիճակն որբոց, աղքատաց,
 պանդխտաց, սուլելոց, և այլն, այժմեան դու-